ՀՏԴ : 929:891.981 Գասպարյան + 891.981

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)*

Լրացավ վաստակաշատ գրականագետ, գրաքննադատ, հայտնի չարենցագետ, հայ գրականության լավագույն գիտակ Դավիթ Գասպարյանի ծննդյան 75-ամյակը:

Դ. Գասպարյանը ծնվել է 1947 թ. հոկտեմբերի 18-ին Երևանում, ուսուցչի ընտանիքում: Դպրոցն ավարտել է 1965-ին և ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունք, որից հետո՝ 1971-ից, աշխատանքի է անցել ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի նորագույն շրջանի հայ գրականության բաժնում: Այստեղ էլ բացահայտվել են նրա ստեղծագործական կարողությունները: Կազմել է նորագույն շրջանի հայ գրականության տարեգրություն, որը զետեղվել է «История советской многонациональной литературы. Летопись 1917–1967 гг.» (М., 1974), *այնուհետև «Սովետահայ գրականության տարեգրություն. 1957–1975» (Երևան, 1975) գրքերում:*

1974 թ. պաշտպանել է «Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը 1940–1970-ական թթ.» թեկնածուական ատենախոսությունը և հրատարակել «Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը» (Երևան, 1979) աշխատությունը, որն արժանացել է բարձր գնահատանքի: Դրանից հետո գրականագետը զբաղվել է նորագույն շրջանի՝ հատկապես 1920–1930-ական թվականների գրականության պատմության ուսումնասիրությամբ և հրատարակել «Եղիշե Չարենցը և 1920-ական թթ. սովետահայ պոեզիան» (Երևան, 1983) աշխատությունը, իսկ մեկ տարի անց պաշտպանել դոկտորական ատենախոսություն: Ավելորդ չէ նշել, որ գրականագիտության ասպարեզում ամենաերիտասարդ տարիքում գիտության դոկտորի աստիճանի հասած մասնագետն է: Այնուհետև նրա մասնակցությամբ և խմբագրությամբ լույս տեսավ «Սովետահայ պոեզիայի պատմություն» (Երևան, 1987) գիրքը:

Դ. Գասպարյանը գրականության ինստիտուտ ընդունվեց որպես լաբորանտ, այլ աշխատանքի անցավ որպես գիտության գծով փոխտնօրեն: 1989–1991 թթ. աշխատել է ՀԿԿ Կենտկոմում որպես գաղափարախոսական բաժնի վարիչի տեղակալ, 1995–1998 թթ.՝ որպես ԵՊՀ հրատարակչության տնօրեն, 1999-ից՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ արտասահմանյան գրականության և գրականության տեսության ամբիոնի դասախոս, 2001–2005 թթ.՝ նույն ամբիոնի վարիչ: 1992-ից աշխատանքի է հրավիրվել նաև Կրթության ազգային ինստիտուտ (մինչև 2004 թ.՝ Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտ,

---

* *Ներկայացվել է 26. X. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

Կրթության բարեփոխման ինստիտուտ), որտեղ մինչև 2018 թ. աշխատել է որպես կաբինետի վարիչ, գլխավոր մասնագետ: 2020 թվականից ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն շրջանի հայոց պատմության բաժնի առաջատար գիտաշխատող է:

1993–2018 թթ. դասավանդել է հանրապետության տարբեր բուհերում: Եղել է զանազան գիտական, մասնագիտական, խմբագրական խորհուրդների անդամ: Նրա ղեկավարությամբ բազմաթիվ երիտասարդ մասնագետներ դարձել են գիտության թեկնածուներ: Այս ընթացքում խմբագրել է «Քննադատական տարեգիրք» հանդեսը (1985–1990) ու «Հայոց լեզու և գրականություն» (2000–2017) ամսագիրը:

Դ. Գասպարյանն արժանացել է Մովսես Խորենացի (2015), Երախտագիտություն (2017) մեդալների, Ակսել Բակունց ոսկե հուշամեդալի, Արվեստի վաստակավոր գործչի (2011) պատվավոր կոչման, ՀԳՄ Միքայել Նալբանդյանի (1984) և Նիկոլ Աղբալյանի անվան (2010) մրցանակների, պարգևատրվել է Մշակույթի (2007, 2012) և Կրթության ու գիտության (2007, 2014) նախարարությունների Ոսկե հուշամեդալով: Արժանացել է նաև տարբեր պարգևների, պատվոգրերի ու շնորհակալագրերի:

Ուր էլ եղել և ինչ էլ արել է Դ. Գասպարյանը, նրա ուշքն ու միտքը եղել են իր հոդվածներն ու գրքերը: Մի նոր ստեղծագործական ալիք նրան համակեց 1985 թվականից հետո, երբ հանրային կյանքում հաղթեցին ազատամտության գաղափարները: Այս ընթացքում նա ուսումնասիրեց գրական և կուսակցական արխիվները, կուտակեց արտակարգ հարուստ նյութ, ճշտեց ու ճշգրտեց գրողների կյանքին ու գործունեությանը վերաբերող կենսագրական, գրականստեղծագործական փաստեր, հրապարակեց սկզբնաղբյուրներ, բնագրեր, տպագրեց հոդվածներ և լույս ընծայեց գրքեր՝ «Հայ խորհրդային գրականության պատմական զարգացման ուղին: Վերելքներ և անկումներ» (Երևան, 1989), «Պոեզիան և կյանքի ճշմարտությունը» (Երևան, 1990), «Ողբերգական Չարենցը» (Երևան, 1990), «Հայրենիք և ճակատագիր» (Երևան, 1991), «Փակ դռների գաղտնիքը: Չարենցը, Բակունցը և մյուսները» (Երևան, 1994): Այս գրքերն ունեցան իրենց գործնական նշանակությունը եոխորհրդային շրջանի գրականագիտական միտքը ձևավորելու գործում: Իսկ դա նշանակում էր ազատագրվել կարծրատիպերից և նոր հայացքով թարմացնել գրականագիտությունն ու գրական քննադատությունը:

Այս շրջանակի մեջ պետք է դիտել նրա հրապարակումներն ու մենագրությունները՝ նվիրված Չարենցին, Բակունցին, Մահարուն և այլ գրողների: Հատկապես Չարենցի ժառանգության ուսումնասիրության և հրապարակման գործում նա մեծ ներդրում ունի: Շարունակելով չարենցագիտության լավագույն ավանդույթները (Հարություն Սուրխաթյան, Սուրեն Երզնկյան, Սիմոն Հակոբյան, Ալմաստ Զաքարյան, Էդվարդ Ջրբաշյան, Սուրեն Աղաբաբյան և ուրիշներ) և լիարժեք օգտագործելով նոր ժամանակների գաղափարական ազատության հնարավորությունները՝ նա ձգտեց ստեղծելու Չարենցի ամբողջական կերպարը: Հեղափոխական Չարենցի կողքին նախ՝ տեսավ ողբերգական Չարենցին, ապա՝ ձգտեց նրա կյանքի ու գործունեության լիարժեք բացահայտմանը: Հրապարակեց Չարենցի անտիպ ժառանգության երկու գիրք՝ «Նորահայտ էջեր» (Երևան, 1996), «Գիրք մնացորդաց» (Երևան, 2012, լրացված՝ 2017), «Չարենցի Հետ: Հուշեր»-ի երկու գիրք (Երևան, 1997, 2008), ուսումնասիրություններ՝ «Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքա-

ղաքը» (Երևան, 1996), «Չարենցյան ասույթներ» (Բեյրութ, 1997): Գրեց «Եղիշե Չարենցի հավատաքննությունը կամ Բանաստեղծի վերջին աղոթքը» դրամատիկ երկը (Երևան, 2003), լույս ընծայեց գրողի «Ընտիր երկեր»-ի քառահատորյակը (Երևան, 2012–2015): Հիմա էլ «Տիգրան Մեծ» հրատարակչությունում տպագրական ընթացքի մեջ է նրա «Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը» հիմնարար աշխատությունը, որը նրա նախատեսած եռահատորյակի առաջին գիրքն է: Հաջորդ հատորները նվիրվելու են գրողի ստեղծագործության և արվեստի վերլուծությանը: Գրականության ինստիտուտի և Չարենցի տուն-թանգարանի համագործակցությամբ սկսել է 13 հատորով Չարենցի երկերի գիտական նոր հրատարակության կազմակերպական և խմբագրական աշխատանքները:

Բակունցին են նվիրված «Ժառանգություն: Բնագրեր: Ուսումնասիրություն» (Երևան, 1999), «Ալեքսանդր (Ակսել) Ստեփանի Բակունց: Մեղադրական գործ № 4131» (Երևան, 1999), «Ակսել Բակունց: Կյանքը և ստեղծագործությունը» (Երևան, 2009) գրքերը: Գուրգեն Մահարուն նվիրված բազմաթիվ հոդվածներից հետո լույս ընծայեց «Գուրգեն Մահարի: Կյանքը և ստեղծագործությունը» (Երևան, 2013) մենագրությունը: Նոր փաստերով ու բացահայտումներով Գասպարյանը նորոգեց այս հեղինակների կյանքի ու գրական ճանապարհի պատկերը: Ուսումնասիրություններ է նվիրել Թումանյանի, Տերյանի ստեղծագործական առանձին էջերի լուսաբանմանը:

Այս շարքի մեջ պետք է դիտել նաև նրա «XX դար: Հայ գրողներ» մատենաշարով լույս տեսած մենագրությունները՝ նվիրված Պարույր Սևակին (Երևան, 2001), Համո Սահյանին (Երևան, 2003) և Վահագն Դավթյանին (Երևան, 2007): Շարքը շարունակվում է «XXI դար: Հայ գրողներ» մատենաշարով. լույս են տեսել «Հոգու հայելի» (2017) և «Հրե վարդ» (Երևան, 2018) մենագրությունները՝ նվիրված ժամանակակից բանաստեղծությանը:

Դ. Գասպարյանը հայ գրականության համակողմանի ուսումնասիրող է: Այս տեսակետից նշանակալի են նրա «Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն» (Երևան, 2009), «Հայկական ապագայապաշտություն» (Երևան, 2009), «Բանք հայոց» (Երևան, 2017) մենագրությունները և «Հայկական Վերածնունդ» ուսումնասիրությունը («Հայկական հայագիտական հանդես», Բեյրութ, 2017, թիվ 37):

Այս շարքում պետք է դիտել նաև նրա հոդվածների ժողովածուները՝ «Բանաստեղծության ոգին» (Երևան, 1980), «Ժամանակ և շարժում» (Երևան, 1984), «Հելիկոնի աստղը» (Երևան, 1988), «Երկնային շուշան» (Երևան, 2004), «Քննադատությունն ընդդեմ քննադատության» (Երևան, 2017), ինչպես նաև «Հայ գրականություն» մատենաշարի վեց գրքերը (Երևան, հ. 1–4, 2000–2010, հ. 5–6, 2016–2017): Գասպարյանի ստեղծագործական կերպարն ամբողջական դարձնելու համար ասենք, որ մասնակցել է հայկական հանրագիտարանների, «Հովհաննես Թումանյան» (2020) հանրագիտարանի աշխատանքներին, գրել բազմաթիվ բառահոդվածներ:

Զբաղվել է նաև համաշխարհային գրականությամբ՝ Լերմոնտով, Ուիթմեն, Մայակովսկի, Եսենին, Բուլգակով, Այթմատով, Դոմբաձե, Մարկես, Սարոյան: Նրա առաջաբաններով ու խմբագրությամբ լույս են տեսել «Ամերիկահայ անդլիագիր բանաստեղծներ» (Երևան, 2010) և Դավիթ Խրդյանի «Ճանապարհ տնից» (Երևան, 2015) գրքերը:

Կազմել, խմբագրել է բազմաթիվ գրքեր, գրել առաջաբաններ, որոնցից կառանձնացնենք միայն հմտությամբ և ճաշակով իրականացված հայ քնարերգության «Ոսկե շղթա» ընտրանին, որը կարճ ժամանակի ընթացքում ունեցավ երկու հրատարակություն (Երևան, 2014, 2019):

Առանձին էջ է Դ. Գասպարյանի գիտակրթական գործունեությունը: Տարիներ շարունակ, ինչպես ՀՀ-ում, այնպես և Արցախում, Վրաստանի հայկական դպրոցներում վարել է ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, մանկավարժների օգոստոսյան խորհրդակցություններ, գրել է մեթոդական ուղեցույցներ, ուսուցչի ձեռնարկներ, կազմել ծրագրեր: 1993 թվականից ավագ դպրոցի նախ՝ 10-րդ, ապա՝ 11–12-րդ դասարանների «Հայ գրականություն», 2011 թվականից՝ 7–9-րդ դասարանների «Գրականություն» գործող դասագրքերի հեղինակն է, որոնք ունեցել են մի քանի վերահրատարակություն: Կապված լինելով դպրոցի հետ՝ գիտեմ, որ այդ դասագրքերը սիրով են ընդունվում և՛ աշակերտների, և՛ ուսուցիչների կողմից:

Դ. Գասպարյանը 1300-ից ավելի հոդվածների հեղինակ է, որոնք ունեն ոչ միայն գրականագիտական, քննադատական, տեսական, գիտակրթական ուղղվածություն, այլև անդրադարձ են կրթական, մշակութային, հանրային, ազգային տարբեր խնդիրների: Կյանքի մեջ լինելը, խոսքի զորությունը կյանքի ճշմարտությամբ ստուգելը նրա ստեղծագործական խառնվածքի անբաժան մասն է:

Ահա այսպես իր վաստակած 75-ամյակն է նշանավորում գրականագետ Դ. Գասպարյանը, որի մասին ժամանակին իրենց գնահատող խոսքն են ասել բազմաթիվ անվանի գրողներ, մշակութային գործիչներ, և նրանց մեջ՝ Հովհաննես Շիրազը, Համո Սահյանը, Էդվարդ Ջրբաշյանը, Սուրեն Աղաբաբյանը, Գևորգ Բրուտյանը, Պողոս Մնապյանը, Ռաֆայել Իշխանյանը, Հակոբ Կարապենցը, Վարագ Առաքելյանը, Ռեգինա Ղազարյանը, Գևորգ Էմինը, Վահե Օշականը, Պեպո Սիմոնյանը, Լևոն Խեչոյանը և շատ ուրիշներ ... Գնահատության նախադրյալն աշխատանքն է, իսկ նա լի է նոր ծրագրերով:

Հաջողություն մաղթենք Դավիթ Գասպարյանի առաջիկա գործունեությանը և սպասենք նոր ձեռքբերումների:

ՌՈՒԶԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

Բ. գ. դ., ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի նորագույն շրջանի հայ գրականության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարի հայ գրականություն, սփյուռքահայ գրականություն: Հեղինակ է 2 գրքի և 60-ից ավելի հոդվածի:
aristakesyanr@yahoo.com